

2016թ. օգոստոսի 28-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.«Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրամի վերակազմավորելու հետ կապված կազմակերպական հարցեր:

/զեկ.՝ Ռ.Հակոբյան/

2.Բեղգիայի Թագավորության Գենտի համալսարանում կիրառվող ուսուցման և սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդների, հմտությունների շրջանակի ներկայացում:

/զեկ.՝ Ս.Խաչատրյան/

3.ԳՊՀ ինստիտուտցիոնալ հավատարմագրման ժամանակացույցի և հիմնական պահանջների ներկայացում:

/զեկ.Ն.Կուտուզյան/

4.2016-17 ուստարվա նախապատրաստման գործընթացը:

/զեկ.Ն.Կուտուզյան/

5.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ներկայացրեց պետական ոչ առևտրային կազմակերպությունից հիմնադրամ դառնալու գործընթացը:

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամը կունենա հոգաբարձուների խորհուրդ: Աշխատանքները պետք է կազմակերպել արդյունավետ, կանոնակարգել բոլոր փաստաթղթերը՝ պատրաստվելով ենթակառուցվածքային հավատարմագրմանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ս.Խաչատրյանը: Նրա հաշվետվությունը վերաբերում էր երկու տարբեր համաժողովների: Առաջինը կազմակերպվել էր ArmenQa ծրագրի շրջանակներում: Զեկուցողն անդրադարձավ Գենտի համալսարանում կիրառվող գիտելիքների ուսուցման, ստուգման և գնահատման մեթոդներին, որակավորումների շրջանակին:

Այնուհետև Ս.Խաչատրյանը ներկայացրեց Սևծովյան համագործակցության շրջանակներում կայացած հանդիպումը: Հանդիպման ընթացքում ուսումնասիրվել են տուրիզմի սեկտորները, առաջարկվել է գտնել զարգացման ուղիներ: Եզրափակիչ հանդիպումը կայացել է Մոլդովայում, որտեղ կազմակերպվել են սեմինարներ, քննարկումներ: Տեղի է ունեցել գինու տուրիզմի զարգացման հարցերի նվիրված քննարկում:

ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուսուզյանը ներկայացրեց ենթակառուցվածքային հավատարմագրման ժամանակացույցը և հիմնական պահանջները: Դիմում-հայտը քննարկվել է և ընդունվել: Հայտնի են փորձագիտական խմբի այցի ժամկետները: Զեկույցի նախնական տարբերակը կներկայացվի բուհ փետրվարին: Կքննարկվեն նկատված թերությունները, իսկ վեոջնական որոշումը կկայացվի ապրիլին: Այնուհետև անդրադարձ կատարվեց ինքնավերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքներին, որոնք պետք է իրականանային սեպտեմբեր ամսին:

Նիստում քննարկվեց և առաջարկվեց հաստատել «Կանոնակարգ Գավառի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի գործունեության» և «Գավառի պետական համալսարանում, կրթական վերջնարդյունքներով պայմանավորված, մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկման ուղեցույցը» ֆաստաթղթերը:

Նիստի վերջում ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը գիտխորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց ուսումնական պլանների, օբյեկտիվ գնահատման, տարբերությունները հանձնելու, ասպիրանտուրայի ընդունելության, քառօրյա պատերազմի մասնակիցներին վերաբերող հարցերի վրա: Միաժամանակ առաջարկեց պատրաստել 2015-16 ուստարվա հաշվետվությունները և 2016-17 ուստարվա զարգացման հայեցակարգերը:

Հիմք ընդունելով զեկուցումները և ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

- 1.ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
2. Ս.Խաչատրյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
3. ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուսուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
- 4.Հաստատել «Կանոնակարգ Գավառի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի գործունեության» փաստաթուղթը:

5. Հաստատել «Գավառի պետական համալսարանում, կրթական վերջնարդյունքներով պայմանավորված, մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկման ուղեցույցը»

Գիտխորհրդի նախագահ՝

/Ռ.Հակոբյան/

Գիտքարտուղար՝

/Թ.Ասոյան/